



## ԼԳԻԿ ՄԻՆԱՅԱՆ

ԵՊՀ պապմության ֆակուլտետի դեկան,

Պապմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

# ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ ԼԳՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂՃԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆԵՆԳԱՓՈՒՈՒՄԸ ԱԳՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ



Սկսած անցյալ դարի 80-ական թվականների երկրորդ կեսից աղբյուրների պատմաբանները լծվեցին հայոց պատմության հիմնահարցերի, առաջին հերթին Արցախյան շարժման, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի, ապա ԼԳՀ պատմությունը կեղծելու և խեղաթյուրելու գործին: Աղբյուրների հանրապետության դեկավարությունը Լեռնային Ղարաբաղի պատմության կեղծարարությունների ռազմավարության կիրառմամբ հետապնդում է ինչպես դարաբաղյան հակամարտությանն առնչվող, այնպես էլ ազգային ու պետական ինքնության ծեղվորման ու ամրապնդման նպատակներ:

Աղբյուրների կողմից պատմական փաստեր կեղծելու, պատմական նոր իրողությունները նեղագիտելու և միջազգային հանրությանը դրանք մատուցելու գործընթացներն իրականացվում են ինչպես պետական, այնպես էլ հասարակական կազմակերպությունների, առանձին անհատների միջոցով, սակայն դրանք կառավարում և ուղղորդում է

պետական իշխանությունը՝ ի դեմս նախագահական ընտանիքի և Հեյդար Ալիևի հիմնադրամի:

ԼԳՀ պատմական փաստերի կեղծման և պատմաճակտության նոր իրողությունների ստեղծման ռազմավարական նպատակների իրականացումն Աղբյուրներում բաշխված է ինչպես նախագահի և նրա ընտանիքի անդամների, այնպես էլ գիտական գործող կենտրոնների՝ ակադեմիայի, բուհերի, նույնիսկ դպրոցների, հասարակական կազմակերպությունների, աղբյուրաբանական համայնքների ու տնտեսական վերնախավի միջև: Պատմական փաստերի կեղծման, համաշխարհային պատմության մեջ Աղբյուրների դերի ուղեղաման, առասպելականացման, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատմության խեղաթյուրման գործընթացներն ընդգրկում են Աղբյուրների հակահայկական տեղեկատվական պատերազմի դաշտը, մասնավորապես ուղղված լինելով ՀՀ և ԼԳՀ տեղեկատվական և առևտրական ազգային անվտանգության դեմ: Անհրաժեշտ է նշել, որ ԼԳՀ պատմության կեղծման ու խեղաթյուրման աղբյուրաբանական քաղաքականությունը դպրոցական դասագրքերում միտված է ավելի լայնորեն ներկայացնելու աղբյուրաբանական տեղեկատվական պատերազմը դարաբաղյան հակամարտության համակարգում. հիմնավորելու դպրոցահասակ երեխաների մեջ աղբյուրաբանական պատմաճակտության կեղծարժեքներ՝ նպատակ ունենալով դաստիարակելու ա) բշնամի հայի կերպար, չխորշելով դասագրքի ամեն էջում մի քանի անգամ հայ ֆաշիստ անվանումից, բ) ներկայացնելով տարածաշրջանում աղբյուրաբանների բնիկ լինելու առասպելը և իբրև փաստ հիմնավորելով տարածքների պատկանելիությունն արդի Աղբյուրների հանրապետությանը, ճեքառայալ Հայաստանի և Արցախի տարածքները, գ) աղբյուրաբան-Ղարաբաղյան պատե-



րազմում աղբբեջանցիների պարտությունները, ռազմական անհաջողությունները փնտրել ոչ թե Աղբբեջանի կողմից սանձազերծած պատերազմի, անօրինակ բռնությունների և մանավանդ պատերազմի սկզբում ռուսական զորքի ու աղբբեջանական օժնի օժանդակությամբ տեղաբնիկ բնակչության նկատմամբ բռնի տեղահանումների, զանգվածային սպանությունների, թալանի և կողոպուտի մեջ, այլև ռուսական զենքի ու զորքի՝ հայ ազգաբնակչությանը ցուցաբերած օգնության մեջ: Դասագրքերի էջերը նվիրված են պարտված աղբբեջանական բանակի փառաբանմանը, առանձին անհայտ զինվորականների «սխրագործությունների» ներկայացմանը և իրենց հերոսությամբ աչքի ընկածների պարգևատրման ամբողջական ցանկերի հրապարակմանը:<sup>1</sup>

Արցախյան 1988 թվականի շարժումից սկսած բնադատվում են Աղբբեջանի հանրապետության ղեկավարները՝ Վեգիորվը, Մուքախբովը, Էլչիբեյը, որոնք համարվում են Մոսկվայի կենտրոնական իշխանության կամակատարներ, բացահայտվում են Աղբբեջանի սոցիալ-տնտեսական ոլորտի, հասարակական-քաղաքական կյանքի բացասական երևույթները և մեղադրվում են վերոհիշյալ ղեկավարները, իսկ Հեյդար Ալիևից սկսած վատ գույներով է մատուցվում Աղբբեջանի սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական, մշակութային կյանքը: Նույնիսկ ռազմական անհաջողությունների մեջ ոչ մի մեղադրանք չի հնչում նրա հասցեին: Նա գովաբանվում է որպես տաղանդավոր ռազմական ու պետական գործիչ, որը կարողացավ Թուրքիայից և Ռուսաստանից ռազմական օգնություն ստանալ: Դասագրքի էջերը լցված են Ալիևի անձի գովեստներով, ողորված նրանից բերված խոսքերով, իսկ հավելվածները նվիրված են Ալիևյան ասույթներին:<sup>2</sup>

Ինչպես երևում է աղբբեջանական դասագրքերից, ՀՀ և ԼՂՀ անվտանգության դեմ ուղղված Աղբբեջանի տեղեկատվական պատերազմը Բաքվի միակ նպատակը չէ: Աղբբեջանում և դրանից դուրս քաղաքական ու մշակութային գործիչների, գիտնականների, լրագրողների և այլոց օգտագործումը հետապնդում է Աղբբեջանի ու աղբբեջանցիների պետական ու ազգային ինքնությունը նոր կերպարի ստեղծումը: Հայտնի է, որ նավթային եկամուտների մի մասը Աղբբեջանի իշխանությունները ուղղում են պետության հե-

ղինակության, դերի ու կերպարի նոր ձեւավորմանն ու դրա ամրագրմանը հին և նոր պատմագիտական աղբբյուրներում, ինչպես նաև ամենօրյա տեղեկատվական հոսքերում:

Աղբբեջանից վարձատրվող աղբբեջանցի և օտարերկրացի մասնագետները գրում են Աղբբեջանի նորագույն պատմությունը՝ իրենց օգտին ծառայեցնելով և մեկնաբանելով ինչպես գոյություն ունեցող փաստերը, այնպես էլ հորինելով «Սարբելով» նոր իրողություններ, որոնք մասնագիտական տեղեկատվական աջակցության շնորհիվ որոշակի ժամանակահատվածում պատմական փաստերի կարգավիճակ են ստանում:<sup>3</sup> Ահա նման հակագիտական պատմաշինությամբ է զբաղվել ու զբաղվում տասնամյակներ շարունակ աղբբեջանական պաշտոնական պատմագրությունը (Ա, Ալեքսեյով, Ջ.Բուրիաթով, Ֆ.Մամեդովա, Ռ.Գեյուշև, Ռ.Մելիքով, Ա.Սումբատզադե և ուրիշներ), ժամանակակից «աղբբեջանցի ժողովրդի» պատմությունը «հնացնելու» մտասերտումով շարունակաբար փորձել է յուրացնել Արեւելյան Այսրկովկասի էթնոմշակութային և քաղաքական պատմությունը:<sup>4</sup> Հենց այդ նյութերն էլ շատերը օգտագործում են աղբբեջանական դասագրքերում: Անկախության հռչակումից հետո Ալիևյան իշխանության ամփոփական ցուցումով աղբբեջանական պատմագրությունը հայտնվեց գիտական ամեն վերահսկողությունից դուրս և նույնիսկ գերազանցեց թուրքական պատմագրությանը:

Դասագրքերում «աղբբեջանական» հրռչակվեցին Այսրկովկասում և նրան հարող երկրամասերում եղած բոլոր իրանական, հայկական և այլ պետական կազմավորումները և դրանց տարածքում ապրած ժողովուրդների պատմությունն ու մշակույթը:<sup>5</sup> Դասագրքերում յուրացվել է Արաքսից հարավ ձգվող, ներկայիս Աղբբեջանի հետ որեւէ կապ չունեցող իրանական Ատրպատական երկրամասի անունը: Եվ նույնիսկ աղբբեջանական հռչակվեցին Հայոց Ոստիք, Արցախ, Սյունիք աշխարհները, Արեւելյան Անդրկովկասի ժողովուրդների՝ լեզգիների, թալիշների, ավարների, թաթարների, պարսիկների և այլոց մշակութային ժառանգության կոթողները:

2009 և 2010 թթ. հրատարակված դպրոցական (11-րդ դասարանների համար, էջ 148, և բուհական դասագրքերում առանձին գլխով ներկայացված է «Աղբբեջանական ԽՍՀ-ն



1980-ական թվականների երկրորդ կեսին և 1990-ական թվականների սկզբին» թեման, որի առաջին ենթաթեման է «Վերակառուցումն ու Աղբբեջանը», որտեղ խոսվում է կայսրության պահպանման փորձերի մասին:<sup>6</sup> Զննադատելով Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը՝ դասագրքի հեղինակները ընդգծում են, որ համապատասխան պայմանների բացակայությունը չտվեց սպասված արդյունքները: Տեղում Աղբբեջանում չընդունեցին կենտրոնի հակասական, անհետեւողական քաղաքականությունը: Վերակառուցում, ժողովրդավարություն, հրապարակայնություն և այլ արտահայտությունները քաղաքական նոր ձեւեր էին: Նշվում է, որ հրապարակայնությունը և վերակառուցումը արագացրին կայսրության կործանումը: Մի առանձին ենթագլուխ վերնագրված է «Հայկական սեպարատիզմի և տեռորիզմի սկիզբը»:<sup>7</sup> Այստեղ նշվում է, որ Մոսկվան տարբեր ձեւերով աշխատում էր կանխել կայսրության փլուզումը: Փորձում էր բնակչության ուղղությունը շեղել ավելի կարեւոր հարցերից: Նման կարեւոր միջոցներից էր թուրք ժողովրդի նկատմամբ ատելության սերմանումը: Ապա մեջ է բերվում Հ. Ալիևի խոսքերը, որը նշում է, թե Գորբաչովը հատկապես ատելություն էր սերմանում մուսուլմանների, թուրքական աշխարհի նկատմամբ: Թուրքական աշխարհի և Աղբբեջանի հզորությունը թուլացնելու նպատակով Մովետական կայսրության ղեկավարությունը կոնֆիկտի նոր օջախ ստեղծեց Լեռնային Կարաբաղի ինքնավար մարզում: Այստեղ քննարկվում են Ջորջի Բալայանի «Օջախ» և այլ աշխատությունները, որոնց հրատարակումը դասագրքերի հեղինակները համարելով կեղծիքներ, աղբբեջանի ժողովրդին վարկաբեկելու միջոցներ, որոնք ավելի սրեցին ազգամիջյան հակասությունները: Կեղծելով պատմական փաստերը՝ նրանք ընդգծում են, որ միայն այն բանից հետո, երբ հայերին պաշտպանող ուժերը ակտիվացան ԽՍՀՄ-ում, իսկ արեւմուտքի մասուլք, սկսեց հակաաղբբեջանական քարոզարշավը, հայերը, ստանալով երկրի ներսի ուժերի և մի շարք երկրների աջակցությունը, սկսեցին բացահայտ ելույթներ ունենալ և հանդես գալ տարածքային պահանջներով: Այս ընթացքում աղբբեջանական ղեկավարությունը ոչ միայն լռել էր, այլ չէր թաքցնում ինտերնացիոնալիստական իր սուտ քարոզները՝ հայ ազգայնա-

կանների կազմակերպված մի քանի տեռորիստական ակտերի պայմաններում, նույնիսկ համաձայնվել էր Ղազախի, Գետաբեկի շրջաններից հազարավոր հեկտար հողատարածք զիջելու Հայաստանին:<sup>8</sup> Ապա շարունակելով նսեմացնել արցախահայության ազնիվ ձգտումները և նեցագափոխելով դեպքերը՝ դասագրքերի հեղինակները ուղղակի նշում են, որ կյանքում «Մեծ Հայաստանի» ստեղծման իրենց պլանները աղբբեջանական հողերի հաշվին կենսագործելու համար հայ ազգային կազմակերպությունները՝ ՀՅԴ կուսակցության ղեկավարությամբ, դարձրեցին իրենց գործունեության ոլորտներ:<sup>9</sup>

Դասագրքում ոչ մի խոսք չկա հայ ժողովրդի օրինական պահանջի 1988թ. փետրվարի 20-ի ԼՂ մարզխորհրդի նստաշրջանի որոշման մասին, որին Աղբբեջանի իշխանությունները սվիններով դիմավորեցին: Փորձելով բնույթ խեղդել սկսված շարժումը՝ նրանք կիրառեցին անօրինակ բռնություններ Արցախի և աղբբեջանական բնակավայրերում ապրող հայ բնակչության նկատմամբ, սկսեցին ոմբակոծել Հայաստանի ասիմանամերձ բնակավայրերը: Այս ամենը ներկայացնելու փոխարեն դասագրքի հեղինակները, կեղծելով պատմական փաստերը, նոր ենթավերնագրերով են ներկայացրել «Աղբբեջանցիներին Հայաստանից վտարելու գործընթացի ավարտը» բաժինը: Այստեղ նեցագափոխելով, գլխավայր շուտ տալով պատմական փաստերը, ցույց են տալիս, թե իբրեւ հայ զինված կազմավորումները բռնություններ կիրառեցին աղբբեջանցիների նկատմամբ՝ նրանց վտարեցին իրենց հայրենի հողից: Ապա բերվում են կեղծված փաստեր, որ իբրեւ դեռ 1988թ. Աղբբեջանում հայտնվեցին առաջին փախստականների խմբերը Ղափանի և Մեղրու շրջաններից: Իսկ փետրվարի 19-ին Նրեւանում, որը անվանվում է Իրիվան, անցկացվեցին առաջին միտինգները՝ «Հայաստանը մաքրելու քայլերից», «Հայաստանը հայերին» և այլ ազգային լուսնագներով:<sup>10</sup> Եվ իբրեւ ոգետրված այդ իրադարձություններով Ստեփանակերտում (Խանքենդի) սկսվեցին միտինգներ ու ցույցեր:

Մոռանալով սունգայիթյան ոմբագործության մասին ներկայացնել՝ դասագրքի հեղինակները բերում են կեղծված մի փաստ, որ իբրեւ փետրվարի 24-ին Ասկերանի շրջանում ապրող հայերը կրակ են բացել աղբբեջանցիների վրա՝ սպանելով 2 և վիրավորելով 19 մարդու: Սունգայիթյան ցեղասպանության



իրողությունը դասագրքերի հեղինակները համարում են սաղրանք, որը կազմակերպել են իբրև հայերը փետրվարի 28-ին: Որ, իբրև Ե.Գրիգորյանը ծագումով հայ, մականունը Պաշա, իրեն ներկայացրել է որպես աղբբեջանցի եւ սպանել է 5 հայ, որից հետո աղբբեջանցիները կոլ գնալով այդ պրովոկացիային՝ կազմակերպել են հարձակումներ հայերի վրա: Նրանք նշում են, որ սունգայիթյան ողբերգության արդյունքում սպանվել են ընդամենը 32 մարդ, ընդ որում 6 աղբբեջանցի, կողոպտվել են 200 բնակարան, այրվել են տասնյակ հասարակական շենքեր, ավտոբուսներ եւ անձնական օգտագործման մեքենաներ: Շարունակելով կեղծել պատմական փաստերը՝ դասագրքի հեղինակները շեշտում են, որ հայերը հասան իրենց ցանկալի արդյունքին, քանզի սունգայիթյան դեպքերը ավելի ընդլայնեցին հակաթուրքական «արյունալի» շարժումը: Այս գլխավոր շուտ տալով պատմական փաստերը՝ հեղինակները աղբբեջանցի վանդակների կազմակերպած ջարդերը վերագրում են հայերին՝ գրելով, թե հայ ֆաշիստները Գուգարքի շրջանում ծառերին կապելով, բենզինով այրեցին 14 աղբբեջանցու, իսկ 70 աղբբեջանցի երեխաների, որոնց վերցրել էին Լենինականի մանկատանից (1-ից 14 տարեկան) Սպիտակում կենդանի-կենդանի խեղդամահ արեցին՝ փակելով խողովակների մեջ: Խեղաթյուրելով պատմական փաստերը՝ Սունգայիթի, Կիրովաբադի, Բաքվի ջարդերը ներկայացվում են իբրև սաղրանքի արդյունք, այնինչ՝ փաստերը միանգամայն այլ բացատրություններ ունեն: Ըստ որի այն կազմակերպվել է աղբբեջանական ղեկավարության կողմից հայերին վախեցնելու եւ նրանց իրենց օրինական պահանջից ետ պահելու համար:

1988-1990 թթ. Սունգայիթում, Կիրովաբադում, Բաքվում հայ բնակչության նկատմամբ աղբբեջանական ղեկավարության իրականացրած անօրինակ բռնությունների նպատակն էր ահաբեկել հայերին ու հարկադրել հրաժարվելու իրենց սահմանադրական օրինական պահանջներից, նրանց դուրս վտնդել ոչ միայն իրենց բնակավայրերից, այլև ընդհանրապես Ղարաբադից: Այդ օրերին Աղբբեջանի շատ ղեկավարների կարգախոսն էր՝ «մահ հայերին»: Հայ բնակչության ջարդերը տեղեցին օրեր շարունակ, իսկ Բաքվի 1990 թ.-ի հունվարի 13-ի կոտորածը 7 օր անընդհանուր:

ԽՍՀՄ փլուզման նախօրեին Աղբբեջանում հակահայկական քարոզը վերստին աշխուժացավ ԼՂԻՄ կարգավիճակի հետ կապված հիմնախնդրի համատեքստում: 1988-1990 թթ. Սունգայիթում, Կիրովաբադում եւ Բաքվում ցեղասպանական գործողություններ հրահրվեցին եւ ընթացան աղբբեջանական հասարակության ներսում հատուկ շրջանավոր ապատեղեկատվությամբ, ըստ որի հայերը «դաժանություններ» էին իրականացնում ՀԽՍՀ եւ ԼՂԻՄ սահմաններում բնակվող աղբբեջանցիների նկատմամբ: ԽՍՀՄ փլուզումից հետո աղբբեջանական ապատեղեկատվական քաղաքականությունը ավելի ծավալվեց, որի նպատակն էր ա) Հանրային կարծիքը համախմբել «ծավալապաշտական» նկրտումներ ունեցող «հայ անջատողականների» եւ «ագրեսորների» դեմ պայքարում: բ) Հայկական զինված ուժերի կողմից «բռնագավթված տարածքները «ագատագրել» եւ մոտալուտ հաղթանակի անխուսափելիության գաղափարներ սերմանել հասարակական գիտակցության մեջ:

Ըստ պաշտոնական հաղորդումների Սունգայիթում ցեղասպանության հետեւանքով զոհվել էր 32 հայ, իրականում դիարաններում այդ օրերին գրանցվել 115 դիակ: Չոհերի թիվը 100-ից ավելի էր: Ընդհանուր նյութական վնասը հաշվարկվեց 216 հազար ռուբլի: Միայն երեք անձի վերաբերյալ գործեր հանձնվեցին ԽՍՀՄ Գերագույն դատարան: Վկաների ցուցմունքներով մեղաքցվեցին աղբբեջանցիների ոճրագործությունները: Թվում էր, թե հրապարակայնորեն կդատապարտվեն ոճրագործ ցեղասպանները, այնինչ 94 մեղադրյալների վերաբերյալ 30 քրեական գործեր մնացին անորոշ վիճակում: Մասկվայում բննվեց ընդամենը 1 գործ, եւ դատարանը միայն մեկին դատապարտեց մահվան, իսկ մնացած գործերի ճակատագիրն առ այսօր հայտնի չէ: Փաստորեն, Աղբբեջանի հանրապետության պետական, կուսակցական, ազգայնամուլ ղեկավար գործիչներ Ալիեւը, Իսկենդերովը, Սուլեյմանովը, Մամեդովը, Վեզիրովը եւ շատ ուրիշներ քրեական կարգով դատական պատասխանատվության չենթարկվեցին: Միայն հայ ազգին պատկանելու շարժառիթով Բաքվում սպանվեցին 200-ից ավելի հայեր, որոշ տվյալներով՝ 150-300, իսկ մեկ այլ աղբբեջանի համաձայն՝ հունվարյան ջարդերի օրերին Բաքվում զոհվածների մեջ 400-ից ավելին հայեր էին: Բոլոր հայերը ար-



տաքավեցին: Բաքվում հայկական ջարդերի վերաբերյալ որեւէ քրեական գործ չհարուցվեց: Մոսկվան չցանկացավ բացահայտել սպանողի ու ջարդի կազմակերպիչներին ու ոգետորդներին: Աղբբեջանում ջարդարարները հայտարարվեցին «ազգային հերոսներ»: ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Սուխարեւը լռությամբ պաշտպանեց Բաքվում կատարված վանդակիզմը:

Սունգայիթում, Կիրովաբադում եւ Բաքվում իրականացված հայոց ցեղասպանության մերժմամբ աղբբեջանական կեղծարարությունը շարունակվեց հայերին «աղբբեջանցիների ցեղասպանություն» իրականացնելու մեջ մեղադրանքում: Այս տեսակետը զարգանում է 1990 թ. հունվարին Բաքվի հայության կոտորածների պատմական իրադարձությունների խեղաթյուրման հիմքի վրա: 1990 թ. Բաքվում խորհրդային բանակի գործողությունների հետեւանքով զոհված աղբբեջանցիները ներկայացվում են որպես հայկական սաղրանքների զոհեր: Սա այսօր էլ Աղբբեջանում հակահայկական քարոզչության բենաներից է: Իրադարձությունները հաճախ ներկայացվում են համատեքստից կտրված՝ դեպքերի մասին հիշատակումը սկսելով միայն հունվարի 20-ից՝ շրջանցելով հայերի՝ հունվարի 13-ի ջարդերը եւ արտաքսումը, որի պատճառով էլ խորհրդային բանակը, թեւ ուշացած, հայտնվել էր Բաքվում: Հունվարի 20-ի իրադարձությունները ներկայացվում են իբրև բողոքի ձայն բարձրացրած աղբբեջանցիների ճնշում խորհրդային իշխանությունների կողմից՝ դրանցում հայերին անուղակիորեն մեղքի բաժին վերագրելով: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ հիշատակվում են հայկական ջարդերի որոշ իրողություններ, ապա դրանք մեկնաբանվում են իբրև հայերի կողմից կազմակերպված սաղրանք, որին միամտաբար կոլ գնացին աղբբեջանցիները: Վերջին հիմնավորումը վերաբերում է հատկապես 1988 թ. Սունգայիթի եւ Կիրովաբադի ջարդերին: Այս նույն սկզբունքով աղբբեջանական կեղծարարությունը 1992 թ. Խոջալուի դեպքերը ներկայացնում է իբրև հայկական զինվորականության կողմից միտոմնավոր սպանություն եւ ուրեմն՝ «ցեղասպանություն»: Այս բոլոր ուղղություններով իրականացվող կեղծարարությունը ծառայում է ոչ միայն Հայոց ցեղասպանության մասին տեղեկատվական հոսքերին հակակշիռ ստեղծելու համար, այլև աղբբեջանցիներին որպես

«զոհի կերպար» ամրագրելու եւ հայերից «բշնամու կերպար» ստեղծելու համար:<sup>11</sup>

Նենգափոխելով 1988-1990 թթ. Սունգայիթում, Կիրովաբադում, Բաքվում հայ բնակչության նկատմամբ աղբբեջանական ղեկավարության ցեղասպանական գործողությունները՝ աղբբեջանցի կեղծարարների քարոզչության ոգով ստեղծվում են նոր «հիշողության վայրեր», ինչպիսիք են «Խոջալուի ցեղասպանությանը» նվիրված հուշարձանը, Շեհիդների ծառուղին՝ Ղարաբադյան պատերազմում զոհվածների զերեզմաններով, 1990 թ. հունվարի 20-ին ռուսական զորքերի Բաքու մտնելու ժամանակ զոհված աղբբեջանցիների հիշատակի հուշակոթողը եւ այլն: 1998 թ. նախագահ Հ. Ալիևի հրամանով մարտի 31-ը աղբբեջանցիների «ցեղասպանության օր» հռչակվեց, որի իրականացման մեջ պաշտոնապես մեղադրվում էին հայերը: Այդ հրամանագրով հիմք ստեղծվեց հակահայկական հատուկ քարոզչության համար:<sup>12</sup>

1988-ի ղեկտեմբերի 11-ին 78 փրկարարներով երկրաշարժից ռուժած բնակչությանը օգնության եկած ԻԼ 76 ինքնաթիռի կործանումը, իսկ ապա նման առաքելությամբ երկրաշարժի գոտում օգնության եկած հարավսլավական ինքնաթիռի կործանումը եւս դասագրքում ներկայացված են իբրև հայերի կողմից խփված ինքնաթիռներ, որոնց իբրև նրանք շփոթել են թուրքական ինքնաթիռների հետ: Ահա, նման ծիծաղելի, անսթաբիլության հասնող կեղծիքներ են գրվում դեպքերում շուտ տալով պատմական ճշմարտացի փաստերը, որ աղբբեջանցի բարբարոսների կողմից իրականացրած ցեղասպանությունների, բռնությունների եւ տեղահանությունների հետեւանք էր: Շուրջ կես միլիոն հայեր Արցախի եւ աղբբեջանցիական տարածքներից բռնագաղթվեցին Հայաստանի Հանրապետություն եւ այլուր, ընդ որում առանց որեւէ փոխհատուցման, մագապուրծ, կիսամեռ վիճակում, իսկ 150 հազար աղբբեջանցիները Հայաստանի Հանրապետությունից տեղափոխվեցին մարդավայել, առանց որեւէ ընդհարման, նրանց տրամադրված մեքենաներով: Նրանք իրենց բնակարանները վաճառեցին՝ ստանալով ամբողջ գումարը, այլ կերպ ասած՝ նրանց կորուստները ամբողջովին փոխհատուցեցին: Այս փաստերը կեղծելով՝ աղբբեջանական դասագրքերում՝ ներկայացվում է, որ 1991թ-ի օգոստոսի 8-ին ռուս զինվորների օգնությամբ վերջին աղբբեջանցիներից



մաքրվեց ՀԽՍՀ Մեղրու շրջանը /Նուվադին/։ Գրանով, ինչպես գրում են դասագրքի հեղինակները, ավարտվեց աղբրեջանցիների արտաքսումը իրենց պապենական հողերից /թե երբվանից հայկական հողերը դարձան աղբրեջանական պապենական հողեր հայտնի չէ/։ Այս բերվում է կեղծված մի փաստ, որ 185 աղբրեջանական գյուղերից, որոնք ՀԽՍՀ-ում էին, արտաքսվել են 230 հազար աղբրեջանցիներ։ Պարզ չափազանցություն է և կեղծիքների շարանը. 1989 թ-ի հուլիսին Ստեփանակերտից բռնագաղթի է ենթարկվել ամբողջ աղբրեջանական բնակչությունը՝ 14 հազար մարդ։ Ակնհայտ կեղծիք է և թվերի ուռճացումը։

Դասագրքի հեղինակները Արցախում 1989թ. հունվարին Մոսկվային անմիջականորեն ենթակա Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումը նրանց բառերով ասած Ա.Վոլսկու գլխավորությամբ, համարում են ԼՂԻՄ-ը աղբրեջանական ենթակայությունից հանելու փորձ, դատապարտում են այն ու գոհունակություն արտահայտում, որ նոյեմբերի 28-ին լիվիդացվեց։<sup>13</sup>

Առանձին ենթագլուխ է նվիրված ժողովրդական շարժմանը։ Ազգային-ազատագրական շարժման սկիզբը ենթադրվում է մանրամասն նշվում են 1988 թ-ի փետրվարի 19-ին Բաքվի միտինգի դեպքերն ու իրադարձությունները, թե ինչպես աղբրեջանցիները պահանջում են վճռական հարված հասցնել և լռեցնել ազատագրական շարժման ամեն մի փորձ, որը կձեռնարկվի ԼՂԻՄ-ում։ Նշվում են նաև, որ բազմամարդ միտինգներ են տեղի ունեցել ոչ միայն Բաքվում 1989 թ-ի նոյեմբերի 15-ից 16-ը, այլև Նախիջևանում և Գյանջայում՝ սկսված դեկտեմբերի 4-ին. նշվում են նաև կենտրոնի կողմից կազմակերպված ձեռնարկության փաստերը և Հ.Ալիեի հետ որեւէ կապ ունենալու արգելքը։ Դասագրքում ներկայացվում է հանրապետությունում իշխանական ճգնաժամը, թե ինչպես 1989 թ-ի դեկտեմբերի 31-ին Նախիջևանի ինքնավար մարզում Սովետա-իրավական սահմանը Արաքս գետի վրա իր սահմանային անցակետերով քանդվեց։ Չարմանալի է, թե ինչպես աղբրեջանցիների հարձակումները սահմանային շրջաններում ներկայացվում են իբրև հայերի կողմից կազմակերպված հարձակումներ։<sup>14</sup> Փորձելով արդարացնել աղբրեջանական ազգային ճակատի /ԱԱՃ/ և Ազգային պաշտպանության խորհրդի /ԱՊԽ/ ստեղծ-

ման կարեւորությունը, մոռանալով Խանլարի շրջանից և հարակից տարածքներից հայկական գյուղերի բռնի հայաթափման փաստը՝ դասագրքի հեղինակները բերում են կեղծված մի փաստ, ըստ որի 1989թ. հունվարի 12-ին 500 զինված հայ ավազակները հարձակվել են Խանլարի շրջանի Դուշու գյուղի վրա։ Հարձակումը ետ մղելու համար Նախիջևանի ազգային ճակատը որոշեց ստեղծել Ազգային պաշտպանության խորհուրդ։ Այս մեջ է բերվում 1920թ. հունվարի 15-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը ԼՂԻՄ-ում և նրա շրջակա տարածքներում արտակարգ դրություն մտցնելու մասին, իսկ հունվարի 19-ին Նախիջևանի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Նախիջևանի ինքնավար մարզը ԽՍՀՄ-ի կազմից դուրս բերելու մասին։ Իսկ ահա Բաքվի հունվարի 19-ի և 20-ի դեպքերը ներկայացնելիս մեղադրվում է միայն Ռուսաստանը, որը գործ մտցրեց ու ճնշեց «ազատագրական շարժումը»։ Այդ օրերը Աղբրեջանում համարվեցին հունվարյան սեւ օրեր։ Բերվում են հորինված տվյալներ, ըստ որի Բաքվում սպանվել են 131 մարդ, 744ը՝ վիրավորվել, իսկ 400ը՝ ձերբակալվել, 4ը՝ անհայտ կորել։ Ի նշան բողոքի ոչ միայն սուգ հայտարարվեց քաղաքում, այլ 40-օրյա համազգային գործադուլ։ Այստեղ գովասանքի խոսքեր են ասվում Հ.Ալիեի մասին, որը իմանալով այդ դեպքերի մասին, վրանգրելով կյանքը, գնում է Մոսկվայի աղբրեջանական ներկայացուցչություն և պահանջում գործերը դուրս բերել Աղբրեջանից՝ դատապարտելով խաղաղ բնակչության դեմ ագրեսիան ու անմեղ մարդկանց սպանությունը։<sup>15</sup> Այս ցույց է տրվում, թե ինչպես Վեզիրովի փոխարեն Աղբրեջանի Կենտկոմի 1-ին քարտուղար է նշանակվում Մոսկվային հյու-հնազանդ Ա.Մուրախրովը, այն դեպքում, երբ ժողովրդի հույսը իբրև կապված էր Հ.Ալիեի հետ, որը անալոզ ժողովրդի ձայնին՝ 1990թ-ի հունիսի 20-ին վերադառնում է Բաքու։ Վախեցած իշխանությունները թույլ չտվեցին նրան մնալ Բաքվում, ուստի, Հ.Ալիեյը մեկնեց Նախիջևան, որի ժողովուրդը սերտորեն համախմբվեց նրա շուրջը։ Ցույց է տրվում, թե ինչպես Նախիջևանի ինքնավար մարզի 1990 թվի նոյեմբերյան նստաշրջանը հանեց Նախիջևանի ինքնավար մարզին ուղեկցող սովետական և սոցիալիստական բառերը։ Իսկ Աղբրեջանի դեմոկրատական հանրապետության դրոշմ դարձավ պաշտոնական դրոշ ինքնավար մարզի։ Այս



ցույց է տրվում, թե ինչպես 1991թ-ի մարտի 17-ին աղբրեջանցի կոմունիստները մասնակցեցին ԽՍՀՄ պահպանմանը վերաբերող հանրաքվեին, որի արդյունքները կեղծվել էին։ Ժողովուրդը ԽՍՀՄ-ը պահպանելու օգտին էր քվեարկել, իսկ Նախիջևանի ինքնավար մարզը չմասնակցեց այդ հանրաքվեին։<sup>16</sup> Նշվում է, որ վախենալով Հ.Ալիեի հեղինակության աճից, նախագահական պաշտոնի համար մրցակցությունից՝ աղբրեջանական սահմանադրության մեջ մտցվեց տարիքային ցեղը, որը թույլ չէր տալիս Հ.Ալիեին մասնակցելու նախագահական ընտրությանը։<sup>17</sup> Առանձին էջերով դասագրքում ներկայացված են Աղբրեջանի պետական անկախության խափանման փորձերը, որը սկսվում է 1991թ. օգոստոսի 19-21-ը Մոսկվայի պետական հեղաշրջման փորձի ձախողումով, որին պաշտպանում էր Մուրախրովի կուսակցությունը։ Այս բերվում է 1991թ-ի օգոստոսի 30-ին Աղբրեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանի որոշումը «Աղբրեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին հռչակագրի ընդունման վերաբերյալ»։ 1991թ. սեպտեմբերի 3-ին, ժողովրդի պահանջով, Հ.Ալիեյը ընտրվում է Նախիջևանի Ինքնավար Մարզի գերագույն մեջլիսի նախագահ, իսկ սեպտեմբերի 8-ին նորից նախագահ է ընտրվում Ա.Մուրախրովը։ Դասագրքում նշվում է, որ ընդդիմությունը ձգտում է ամեն կերպ հասնել իշխանության, ուստի 1991թ-ի հոկտեմբերի 3-ի համաձայնության շնորհիվ ստեղծվեց ազգային խորհուրդը։<sup>18</sup> 1991թ-ի հոկտեմբերի 18-ին աղբրեջանական գերագույն խորհուրդը ընդունեց սահմանադրական ակտ՝ աղբրեջանական հանրապետության պետական անկախության մասին։ Նշվում է, որ 1991թ դեկտեմբերի 29-ին աղբրեջանական հանրապետությունում անցկացված հանրաքվեով Աղբրեջանի ժողովուրդը միաձայն որոշեց անկախանալ, որը ստացավ իրավական ձևակերպում։ 1992թ մայիսին Փոքր մեջլիսը հաստատեց պետական դրոշմ, իսկ 1993 թվին՝ հանրապետության պետական զինանշանը։ Այս ներկայացվում է Աղբրեջանի անկախության ճանաչումը 100-ից ավելի պետությունների կողմից, որոնցից առաջինը Թուրքիան էր, ապա Ռումինիան, Պակիստանը, Շվեյցարիան, Իրանը, ԱՄՆ-ը, Ռուսաստանի Դաշնությունը և այլ պետություններ։ 1993 թ. աղբրեջանական հանրապետության հետ դիվանա-

գիտական կապեր հաստատեցին 70-ից ավելի արտասահմանյան երկրներ։ Աղբրեջանը 1992 թ-ի մարտի 2-ին դարձավ ՄԱԿ-ի անդամ և այլն։

Հաջորդ գլխում ներկայացված են Ղարաբաղյան պատերազմը և քաղաքական ճգնաժամի խորացումը։ 1991թ-ին, ինչպես գրում են դասագրքի հեղինակները, Հայաստանը ԽՍՀՄ ռազմաքաղաքական ուժերի կողմից ստանալով մեծ օգնություն՝ սկսեց ռազմական խոշորամասշտաբ գործողություններ Աղբրեջանի դեմ։ Իրականում հակառակը եղավ, և նա պատմական ճշմարտություն է։ Սակայն խեղաբյուրեղով այն հեղինակները գրում են, որ 1991 թ-ի նոյեմբերի 20-ին հայ տեռորիստների կողմից խփվեց աղբրեջանական ուղղափոռ Գարաբենդ գյուղի մոտ, որի մեջ էին Աղբրեջանի պետական պաշտոնատար անձինք՝ պետքարտուղար Թոֆիկ Իսմաիլովը, ՆԳ նախարար Մուհամեդ Ասադովը, գլխավոր դատապաշտ Իսմեյլ Լարիբովը և ուրիշներ, որոնք մեկնել էին ուսումնասիրելու Արցախի Խոջազենդ գյուղի իրավիճակը, որը ենթարկվել էր հայերի հարձակմանը։ Այստեղ մեջբերելով հայ-ռուսական համագործակցության և բարեկամության պայմանագիրը, նշվում է, որ դրանով Ռուսաստանը բացահայտ օգնում էր հայերին։<sup>19</sup> Նշվում է, թե ինչպես 1991թ-ի նոյեմբերի 22 տարածքային ինքնապաշտպանական գումարտակներ, և աղբրեջանական զինված ուժերը վերջնականապես կազմավորվեցին 1991թ-ի հոկտեմբերի 9-ի որոշումով, սակայն անհրաժեշտ կարգապահություն չկար բանակում, չկար փորձառու հրամանատարական կազմ, և որոշ զորամասեր գնում էին առանձին քաղաքական ուժերի հետևից։ Հայկական զորամասերի գործողությունները և ռազմական հաջողությունները կապում են ռուսական օգնության հետ։ 1992 թ. հունվարին Կրկման, փետվարին Մալիբեյլի, Խոշաչուրի, Խոջալուի, մայիսին Շուշի գրավումը նրանք համարում են հայ և ռուս զինված ուժերի համագործակցության արդյունք։ Շուշի մասին խոսելիս նշվում է, որ Շուշին պաշտպանողները նոր կազմավորված զորամասեր էին. Լարաղաղի գյուղը գրավելով՝ հայերը շեշտել են, որ այստեղ սպանվել և գնդակահարվել են գյուղի 150 ինքնապաշտպան բնակիչների, որոնց մետել են սիլոսի հորերը։ Առանձին ենթագլխում ներկայացվում է Խոջալուի դեպքերը, որոնք



վերնագրված են ցեղասպանություն անունով: Դասագրքի հեղինակները՝ կեղծելով պատմական փաստերը, գրում են, որ 1992 փետրվարի 22-ին երեկոյան, ժամը 9-ին հայկական ռազմական կազմավորումները ռուսական 366-րդ մեքենայացված դիվիզիայի հետ միասին հարձակվեցին Խոջալուի վրա՝ չափազանցելով հայկական ուժերի քանակը եւ նվազեցնելով աղբբեջանցի պաշտպանների թիվը՝ 150-ի: 22 պաշտպաններ Ալիֆա Հաջիեի ղեկավարությամբ 3 անգամ ետ են մղել թշնամու՝ հայերի հարձակումները, որի արդյունքում նա հերոսաբար գոհվել է, եւ համարվում է Աղբբեջանի ազգային հերոս: Ապա ցույց է տրվում, թե ինչպես հրամանատար Թոֆիկ Հուսեյնովը իր մարտական ընկերներով ետ է մղել թշնամու բազմաթիվ գրոհներ եւ օգնել խաղաղ բնակչությանը դուրս գալ շրջափակումից:<sup>20</sup> Ընկնելով շրջափակման մեջ՝ նա ինքնասպանությամբ վերջ է տալիս իր կյանքին եւ հետմահու արժանանում Աղբբեջանի ազգային հերոսի կոչման: Խոջալուի գոհերի թիվը չափազանցելով՝ աղբբեջանցի հեղինակները նշում են, որ ցեղասպանության հետեւանքով գոհվեց 613 մարդ, 487-ը ծանր վիրավորվեց, 1275-ը գերի ընկավ, 8 ընտանիքներ իսպառ ոչնչացվեցին, իսկ քաղաքն էլ այրվեց: Այդ ժամանակ նույնիսկ դիակների հետ վարվեցին շատ դաժանորեն: Ամփոփելով նշում են, որ այդ ողբերգությունը ամենադաժան գործողությունն է մարդկության դեմ 20-րդ դարում: Կեղծելով եւ խեղաթյուրելով Խոջալուի դեպքերը՝ նրանք մոռացության են տալիս Սուճալիքն ու Բաքուն:

Շուշիի եւ Լաչինի գրավմանը առանձին ենթագլուխ է հատկացված: Շուշիի պարտության մեջ նրանք մեղադրում են ռուսական կողմնորոշում ունեցող Ռ.Ղազիեիին, որը նշանակվել էր պաշտպանության նախարար: Պաշարված Շուշիի կայազորի 1500 մարտիկներից մնացել էր ընդամենը 500 մարդ ըստ դասագրքի հեղինակների, բանակից զինվորների դասալքումը եւ նրանց արձակուրդի ուղարկելը թշնամու հարձակման նախօրյակին, գրում են գրքի հեղինակները, վկայում են Ղազիեի հետին մտքերի եւ մտացածին գործողությունների մասին, որ նա կազմակերպել էր ռուսական հրամանատարության հետ միասին: Նշվում է, որ մայիսի 7-ին եւ 8-ին քաղաքը հայերի կողմից ենթարկվել է ուժեղ ուժալիքների, թշնամու 6000 զորք եւ 72 տանկ շարժվել են քաղաքի վրա ռուսական 366-րդ

գնդի հետ միասին: Այս պայմաններում իբրեւ աղբբեջանական կողմը քաղաքից հանել է ռազմական տեխնիկան: Ուժերի անհավասարության պայմաններում մայիսի 9-ին Շուշին ընկավ: Ապա հանգամանորեն նշվում է, թե ինչպես աղբբեջանական ռազմական ուժերի դուրսբերումը Լաչինից ավելի սրեց քաղաքական ճգնաժամը երկրում, ինչպես Իսա Ղամբարովը ԱԱԾ-ի եւ գորքի օգնությամբ կարողացավ մայիսի 18-ին Աղբբեջանի Գերագույն խորհրդի նախագահ ընտրվել, իսկ 1992 թ-ի հունիսի 7-ին ԱԱԾ-ի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը հանրապետության նախագահ ընտրվեց: Դրանով Աղբբեջանում սկսվեց իշխանության տանդեմը հանձնինս /ԱԱԾ-Մուսաֆաթի/: Դրանով պայմանավորվեցին, ըստ հեղինակների, հետագա պարտությունները: Ներկայացվում է երկրի տնտեսական ու քաղաքական ճգնաժամը,<sup>21</sup> ցույց է տրվում թե ինչպես Էլչիբեյը փորձում էր վիճակը շուկել սեփական ուժերով, եւ ճիզ չէր անում համաշխարհային հասարակությանը համոզելու, որ սատարեն աղբբեջանցիների արդար պայքարին: Նույնիսկ նման պայմաններում ԱՄՆ-ի սենատը որոշում ընդունեց եւ դատապարտեց Աղբբեջանի կողմից Հայաստանը շրջափակելու համար եւ ընդունեց 907 բանաձեւը՝ ազատության պաշտպանության ակտը, որով արգելվեց Աղբբեջանին ցույց տրվող ԱՄՆ-ի պետական օգնությունը: Ցույց է տրվում, թե ռուսական կողմը ինչպես է օգնում Հայաստանին, իսկ Աղբբեջանի գորքն ու տեխնիկան անմխիթար վիճակում են, որ զինված ուժերի հրամանատարությունը չէր ենթարկվում պաշտպանության պետական խորհրդին եւ գերագույն գլխավոր հրամանատարությանը, որ ամենուրեք գողություն ու թալան էր երկրում, կաշառակերություն, որի պատճառով աղբբեջանական գորքը պարտություններ էր կրում իրար հետեւից: Այնուհետեւ ներկայացվում է, թե ինչպես 1992 թ-ի վերջերին եւ 1993 թ-ի սկզբներին հայկական ուժերը գրավեցին «աղբբեջանական տարածքները», 1993 թ-ի ապրիլի 3-ին հայերը գրավեցին Քելբաջարը, իսկ 15 հազար խաղաղ բնակիչներ գերի ընկան:<sup>22</sup> Այստեղ գրավվեց 144 բնակավայր, թալանվեցին 500 ձեռնարկություններ, 13 հազար բնակարան, բռնագրավվեց 600 հազար անասուն, 5000-ից ավելի ձիեր եւ այլն: Ցույց է տրվում, որ Քելբաջարի անկումը ավելի ուժեղացրեց քաղաքական ճգնաժամը երկրում եւ հասցրեց իշխանության կործանման:



Առանձին գլխով ներկայացվում է ազգային փրկությունը՝ «Հ.Ալիեի վերադարձը» ենթագլխի տակ: Ցույց է տրվում, թե իբրեւ ժողովրդի պահանջով Նախիջեւանում 1992-93 թթ. մեծ ծավալի աշխատանքներ տարած Հ.Ալիեը 1993 թ-ի հունիսի 9-ին ժամանեց Բաքու, թե ինչպես ժողովուրդը ցնծությամբ դիմավորեց իր ազգային փրկարարին: Ապա Ալիեը հունիսի 13-ին եւ 14-ին եղավ Գյանջայում, որից հետո հունիսի 15-ին ընտրվեց Աղբբեջանի Գերագույն խորհրդի նախագահ: Այդ օրը Աղբբեջանի պատմության մեջ մտավ «ազգային փրկության օր» անունով:<sup>23</sup> Դրանով, ինչպես գրում են հեղինակները, կանխվեց քաղաքացիական պատերազմը: Ա.Էլչիբեյը հունիսի 18-ի գիշերը թողեց մայրաքաղաքը եւ հեռացավ իր հայրենի Նախիջեւանի Օրդուբադի շրջանի Քելեթի գյուղը: Նրան ետ կանչելու փորձերը ապարդյուն անցան եւ հունիսի 24-ին միլի մեջլիսը նախագահի ֆունկցիաները հանձնեց Հ.Ալիեիին: Ապա նշվում է, թե ինչպես 1993 թվականի օգոստոսին հայերը գրավեցին Ջաբրայիլի, Ֆիզուլու եւ Հորադիզի շրջանները: Դրանից հետո Աղբբեջանի ժողովուրդը իբր ավելի հեռավաճակեց Հ.Ալիեի շուրջը, որն էլ 1993 թ-ի օգոստոսի 29-ին անցկացրեց հանրաքվե, որի ժամանակ բնակչության 97 տոկոսը արտահայտվեց Ա.Էլչիբեյին վստահելու դեմ, եւ 1993 թ-ի հոկտեմբերի 3-ին աղբբեջանական ժողովուրդը ձայների մեծամասնությամբ նախագահ ընտրեց Հեյդար Ալիեիին: Ցույց է տրվում, թե ինչպես 1993 թ-ին սեպտեմբերի 24-ին Աղբբեջանը մտավ ԱՊՀ-ի մեջ: Նշվում է նաեւ, որ մի քանի սաղոյիզ գործողությունների արդյունքում աղբբեջանական զինված ուժերը ենթարկվելով քաղաքական տարբեր ուժերի՝ հոկտեմբերի 30-ին թողեցին Չանգելանի շրջանը, որը անցավ հայերին: Ցույց է տրվում նաեւ, թե ինչպես 1993 թ. նոյեմբերի 1-ին ստեղծվեց Պաշտպանության պետական խորհուրդը Ալիեի ղեկավարությամբ, իսկ նոյեմբերի 2-ին իր հեռուստատեսությամբ նա կոչ արեց պաշտպանել հայրենիքը: Ապա ներկայացվում է, թե ինչպես 1994 թ-ի սկզբներին Հ.Ալիեի հրամանով աղբբեջանական զորքը սկսեց հարձակողական գործողությունները, եւ աղբբեջանական ազգային բանակը ազատագրեց Հորադիզը ու 22 գյուղեր Ֆիզուլու շրջանից եւ մի շարք բնակավայրեր Ջաբրայիլի ու Քելբաջարի շրջաններից: Շարունակելով ատելություն սերմանել հայ ազատարարների նկատմամբ՝ դասագրքի հե-

ղինակները գրում են, թե հայ ֆաշիստների կողմից սպանվեցին 4000 աղբբեջանցի զինվորներ ու սպաներ, ոչնչացվեց 50 միավոր տեխնիկա, 15 հրաձգային սարքավորում եւ այլն: Շարունակելով գովաբանել Ալիեի ռազմական հմտությունները եւ հեռատես արտաքին քաղաքականությունը՝ դրական են արձանագրում Աղբբեջանի մուտքը ՆԱՏՕ-ի մեջ եւ հարաբերությունների կարգավորումը Ռուսաստանի հետ, ապա Մինսկի խմբի գործունեությունը Ղարաբաղյան հարցի կարգավորման ուղղությամբ: Ներկայացնելով Աղբբեջանի հաջողությունները՝ դասագրքի հեղինակներն ընդգծում են Հ.Ալիեի մեծ ներդրումը 1994 թվականի մայիսի 12-ի զինադադարի, խաղաղության հաստատման մեջ՝ այն համարելով մարտավարական հմուտ քայլ հետագայում կորցրածը ետ բերելու կարևոր նախապայման: Դրանից հետո առանձին էջեր են նվիրում Հ.Ալիեի դիվանագիտական հմտությունների ներկայացմանը: Ցույց է տրվում նրա հմուտ տաղանդի գործադրմամբ 1994 թ. սեպտեմբերի 29-ի, հոկտեմբերի 2-ի, 4-ի պետական հեղաշրջման փորձերի ձախողումը: Վերջինիս կազմակերպիչը, ըստ դասագրքի հեղինակների, Ս.Հուսեյնովի կողմնակիցներն էին, որոնք գրավել էին Գյանջան եւ այստեղ ստեղծել իրենց իշխանությունը: Այստեղ ներկայացված է Հ.Ալիեի վճռակալությունը եւ քաղաքական ճիշտ կողմնորոշումը, որը կարողացավ ճնշել պետական հեղաշրջման ամեն մի փորձ եւ ստրպանդել իր իշխանությունը:<sup>24</sup> Միաժամանակ, հատուկ ընդգծվում է 1995 թ.-ի մարտին պետական հեղաշրջման փորձի ձախողումը եւ դատապարտվում Բաքվում Ռ.Ջավադովի պահանջը նախագահի հրաժարականի մասին, որն ավարտվեց նրա նկատմամբ վճռական գործողություններով: 15 էջի սահմաններում ներկայացված են Աղբբեջանի հաջողությունները սոցիալ-տնտեսական, պետական շինարարության ոլորտներում եւ արտաքին քաղաքականության մեջ:

Առանձին ներկայացված է Աղբբեջանի մշակութային վերածնունդը ալիեյան ժամանակաշրջանում: Դասագրքում բերված են Հ.Ալիեի կյանքի, գործունեության վերաբերյալ առանձին փաստաթղթեր, նրա ճաներից ու ելույթներից մեջբերումներ՝ մի քանի էջերով: Դասագրքի հեղինակները 2003 թ-ի օգոստոսի 4-ը համարում են Աղբբեջանի ժամանակակից պատմության նոր փուլի սկիզբ,



քանզի կառավարության նախագահի պաշտոնում նշանակվեց 42-ամյա երիտասարդ Իլիամ Ալիևը՝ Հ.Ալիևի որդին, որը ըստ հեղինակների՝ խոր գիտելիքներով օժտված, լայն մտածողի գործի տեր եւ բարձր կազմակերպվածություն ունեցող անձնավորություն է: Հոկտեմբերի 15-ին նա ընտրվեց երկրի նախագահ: Դասագրքի հեղինակները ողբալով Հեյդար Ալիևի մահը՝ հատուկ ընդգծում են, թե ինչպես 2003թ-ի դեկտեմբերի 12-ին ամբողջ բուրբակյան աշխարհը համազգային սուգ ապրեց Հեյդար Ալիևի մահով:

2008 թ-ի հոկտեմբերի 15-ին Իլիամ Ալիևը նորից ընտրվեց երկրի նախագահի պաշտոնում, ապա դասագրքի հեղինակները Հ.Ալիևին գովաբանելու ոճով շարունակում են նույն գովասանքը կրտսեր Ալիևի գործունեության վերաբերյալ: Առանձին ենթազխտվ մերկայացված է Արդրեջանի հաջողությունները դարաբաղյան հարցի քննարկումների ընթացքում: Հատուկ անդրադարձ է կատարված Լիսաբոնի ժողովի որոշումներին՝ տարածքային ամբողջականության սկզբունքի ընդունումը համարելով Արդրեջանի ամենամեծ ձեռքբերումը, ապա թուցիկ անդրադառնում են Միւնսխի խմբի համանախագահների կատարած աշխատանքներին: Դասագրքում ընդգծվում է ադրբեջանական բանակի հզորության աճը, պետական մեծ միջոցների հատկացումը այդ ոլորտին, որը հնարավորություն է տալիս Արդրեջանին խոսելու եւ վարելու սպասնալիքի թաղաքականություն ուժի դիրքերից: Մեջ է բերվում Ի.Ալիևի խոսքերը այն մասին, որ եթե խաղաղ բանակցությունները արդյունք չտան, ապա հարցը կլուծվի ռազմական ուժով, որին Արդրեջանը պատրաստ է:

Այսպիսով, ադրբեջանական դասագրքերում շարունակվում է բշնամի հայի կերպարի ձեւավորման քաղաքականությունը: Անհրաժեշտ է Արցախյան շարժման պատմության եւ ԼՂՀ պատմության նենգափոխման դեմ նոր ուժով պայքարել, ուստի հրատապ խնդիր է դառնում Արդրեջանի իսկական պատմությունը եւ այն թարգմանել ու հրատարակել մի քանի լեզուներով: Ոչ միայն պատասխանել նրանց հորինած պատմություններին, այլեւ վճռականորեն մերկայացնել բոլոր խեղաբյուրումները, հերյուրանքները՝ ցույց տալով դրան գուգահեռ մեր ժողովրդի հերոսական պատմությունը, դաստիարակելով իսկական հայրենասեր սերունդ:

## ԾԱՆՈԹՎՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Տիւ Իստորյա Ազերբայձձանա, учебник для 11-ого класса общеобразовательной школы, под общей редакцией заслуженного деятеля науки, профессора Исага Мамедова, доктор исторических наук, проф. Сейфердина Гандилова, Баку, 2011, с.170, 181, 190, 191, 192.*

2. *Տիւ նույն տեղում, էջ 191, 192:*

3. *Ա.Արսինսյան, Հայաստանյան պարմության ադրբեջանական արդի կեղծարարությունների հարցի շուրջ, տիւ «Պարմություն եւ մշակույթ. ընդդեմ կեղծիքի եւ ուրնչգության» հանրապետական գիրաժողովի հիւնադրութեան, Երեւան, 2011, էջ 15, 16:*

4. *Գ.Սրեփսյան, Արեւելյան Այրկովկասի ժողովրդագրության խեղաբյուրումը ադրբեջանական պարմության մեջ, տիւ նույն տեղում, էջ 10, 13, 23:*

5. *Ա. Մերսյան, Պարմության կեղծարարության բուրբ-ադրբեջանական մերդարանական հիւնք, տիւ նույն տեղում:*

6. *Ի. Մամեդով, Կ. Կաֆերով եւ օրյու «Իստորյա Ազերբայձձանա» տիւ учебник для 11-ого класса общеобразовательной школы, под общей редакцией заслуженного деятеля науки, профессора И. Мамедова, д.и.н., проф. С. Гандилова, с.147-155.*

7. *Տիւ նույն տեղում:*

8. *Տիւ նույն տեղում, էջ 148:*

9. *Տիւ նույն տեղում, էջ 149:*

10. *Տիւ նույն տեղում:*

11. *Էդիկ Մինասյան, Սունգալիքի եւ Բարվի ջարդերի ադրբեջանական կեղծարարությունը, «Պարմություն եւ մշակույթ. ընդդեմ կեղծիքի եւ ուրնչգության, հանրապետական գիրաժողովի հիւնադրութեան», Երեւան, 2011, էջ 24:*

12. *Տիւ նույն տեղում, էջ 25, 26:*

13. *Տիւ նույն տեղում, էջ 150:*

14. *Տիւ նույն տեղում, էջ 152*

15. *Տիւ նույն տեղում, էջ 153:*

16. *Տիւ նույն տեղում, էջ 155:*

17. *Տիւ նույն տեղում, էջ 155:*

18. *Տիւ նույն տեղում, էջ 166:*

19. *Տիւ նույն տեղում, էջ 169:*

20. *Տիւ նույն տեղում, էջ 170:*

21. *Տիւ նույն տեղում, էջ 172:*

22. *Տիւ նույն տեղում, էջ 175:*

23. *Տիւ նույն տեղում, էջ 177:*

24. *Տիւ նույն տեղում, էջ 182:*